ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 հուլիսի 2019թ. թիվ 360

ԿԻՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի 04.04.2019թ. թիվ 04/24.1/5341-19 գրությունը, ՀՀ կրթության տեսչական մարմնի 01.04.2019թ. թիվ 1 ստուգման ակտի 2.1 կետը և ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի պետի 08.03.2019թ. թիվ 60/2-1482 միջնորդագիրը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Կ.Պետրոսյանը հրաժարվել է ներկայացնել գրավոր բացատրություն՝

Կ ա ր գ ա դ ր ո ւ մ եմ.

1. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու և դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու համար «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կիմիկ Պետրոսյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կ.Պետրոսյանին՝

10-օրյա ժամկետում միջոցներ ձեռնարկել դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու ուղղությամբ և արդյունքների մասին տեղեկացնել:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հուլիսի 26
ք. Վանաձոր